Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի
«Բասենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի
ապրիլի «07»-ի N 09-Լ հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Բասենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի (ուսումնական գծով տնօրենի տեղակալ) և հոգեբանի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

N	Թափուր պաշտոնի անվանումը	Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)	Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝	Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը
1	2	3	4	5
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Բասենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1.Մեթոդիստի (ուսումնական գծով տնօրենի տեղակալ) -0.5 դրույք /60.000 ՀՀ դրամ աշխատավարձ) 2. Հոգեբան-0.5 դրույք /60000 ՀՀ դրամ աշխատավարձ/	1) **Որակավորման պահանջները** Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը ուսումնական գծով տնօրենի տեղակալ պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ։ Հաստատության հոգեբանի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն։ **2) Ընդհանրական պահանջները** Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստը տնօրենի ուսումնական գծով տեղակալը և հոգեբանի պաշտոն զբաղեցնողները պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները. ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները։	**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝ 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ. 2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից. 3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը. 4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն	1) դիմում (Ձև 1). 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ). 3) անձը հաստատող փաստաթուղթ. 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում). 5) ինքնակենսագրություն (Ձև 4). 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի. 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ. 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները

			դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:	ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
		Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:		**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:**
2	**Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը**	**Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները**
	Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Բասեն 1բ փողոց շենք 1/մանկապարտեզ/ **Օրը՝** 2025 թվականի **մայիսի 15-ին** ժամը՝ 12:00	Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Բասեն, 1 բ փողոց շենք 1 /մանկապարտեզ/ **Հեռ. 098 556875** **Էլ. հասցե՝ basenhoak@mail.ru** **Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:** **Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978:**		**2025 թվականի ապրիլի 08-ից մինչև 2025 թվականի մայիսի 7-ը ներառյալ**
		Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից: **Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել akhuryan.am կայքերում:**		